ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
09 սեպտեմբերի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 62 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը, Սոնա Թևանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, ֆինանսական վարչության պետի տեղակալ Նարեկ Մինասյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2025 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 61, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը և առաջարկեց օրակարգի նախագծի 13-րդ՝ «Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը հանել:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկն ընդունվեց և օրակարգի նախագծի 13-րդ՝ «Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը հանվեց օրակարգի նախագծից:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի չզեկուցվող 13-րդ՝ «Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 20-րդ՝ «Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ օրակարգի չզեկուցվող 13-րդ՝ «Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտա հ.45/6 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը հանվել է օրակարգի նախագծից:

Քվեարկության դրվեց օրակարգի չզեկուցվող 20-րդ՝ «Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 24, դեմ՝ 32, ձեռնպահ՝ 2

Առաջարկը չընդունվեց:

Ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 29 հարց, որից՝ 2-27-րդ հարցերը չզեկուցվող են:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
3. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
4. Գ. Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Կարեն Սահակյանին պատկանող հողամասը Արտաշատի խճուղու հ.63 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման

մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)

6. «Երևանի հ.104 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքում անձրևաջրերի հավաքման, ֆիլտրման և ոռոգման նպատակով օգտագործման 2026 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինայի փողոց 3-րդ նրբանցք հ.4/1 հասցեում բնակելի թաղամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Անաստաս Միկոյան փողոց հ.111/7 հասցեում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոց հ.70/2 հասցեում հասարակական նշանակության շինության՝ մեծածախ առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 25 հասցեում պահեստային շինության (անգար) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց հ.54/12-54/9 հասցեում հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ.13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց հ.6/3 և 8 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
16. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

17. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
19. Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:
22. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Զեկուցվող)
23. Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն ներդնելու, միասնական ծառայության կազմակերպման տեղական վճարը վճարելու եղանակը և տրանսպորտային միջոցում վավերացնելու կարգը սահմանելու մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N265-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N267-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին: (Զեկուցվող)
27. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
28. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Զեկուցվող)
29. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 13, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ

կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 27-րդ հարցերը:

Տ.Ավինյանը օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերի վերաբերյալ ներկայացրեց պարզաբանումներ:

2. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ՝ «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Դեֆանս Հաուզինգ թաղամաս հ. 1/2, հ. 1/3 և հ. 1/4 հասցեներում, տարածագնահատման 12-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 13000.0քմ, 4300.0քմ և 4300.0քմ մակերեսներով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15072024-01-0300, հ.15072024-01-0298 և 15072024-01-0297 վկայականներ/ հողամասերը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Սիլիկյան հին խճուղի հ.41/1 և Դեֆանս Հաուզինգ թաղամաս հ.70 հասցեներում, տարածագնահատման 12-րդ գոտում և Սիլիկյան հին խճուղի հ.39/5, Պ.Տիչինայի փողոց հ.320/66 և Պ.Տիչինայի փողոց հ.320/64 հասցեներում տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 11048. 0քմ 805. 4քմ, 5927. 6քմ, 963. 40քմ և 2855. 6քմ մակերեսներով հողամասերի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18112024-01-0382, հ.18112024-01-0441, հ.18112024-01-0337, հ.18112024-01-0380 և հ.18112024-01-0250 վկայականներ/ հետ փոխանակելուն:

3. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ՝ «Միլենիում Պարկ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Նորքի հ.105, Նորք թաղամաս հ.հ.105/1, 105/2, 105/3 հասցեներում, տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող ընդհանուր 8693.0քմ մակերեսով /600.0+1957.0+2757.0+3379.0/ հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20102022-01-0462, հ.07102022-01-0053, հ.30092022-01-0062 և հ.30092022-01-0085 վկայականներ/ հողամասերը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Մելքոնյան փողոց հ.22/4 հասցեին կից, տարածագնահատման 5-րդ գոտում 4705.0քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

4. Գ.Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Կարեն Սահակյանին պատկանող հողամասը Արտաշատի խճուղու հ.63

հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ՝ Կարեն Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գ. Նժդեհի փողոցի հ.23/4 հասցեում, տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 300.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.04032021-01-0158 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արտաշատի խճուղու հ.63 հասցեում, /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08082025-01-0058 վկայական/ տարածագնահատման 12-րդ գոտում գտնվող 1063.83քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

5. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 47-53-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

6. «Երևանի հ.104 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևանի հ.104 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել 13-րդ դարի մանկավարժ, գիտնական և ազգային-հասարակական գործիչ Վարդան Արևելցու անվամբ՝ «Երևանի Վարդան Արևելցու անվան հ.104 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

7. Երևան քաղաքում անձրևաջրերի հավաքման, ֆիլտրման և ոռոգման նպատակով օգտագործման 2026 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևան քաղաքում անձրևաջրերի հավաքման, ֆիլտրման և ոռոգման նպատակով օգտագործման 2026 թվականի բնապահպանական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինայի փողոց 3-րդ նրբանցք հ.4/1 հասցեում բնակելի թաղամասի կառուցման

նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ՕՐՈԼՈՒՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինայի փողոց 3-րդ նրբանցք հ. 4/1 հասցեում բնակելի թաղամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

9. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Անաստաս Միկոյան փողոց հ.111/7 հասցեում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Անաստաս Միկոյան փողոց հ.111/7 հասցեում ֆուտբոլի դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոց հ.70/2 հասցեում հասարակական նշանակության շինության՝ մեծածախ առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Վահե Կարապետյանի լիազոր անձ Արմեն Գագիկյանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոց հ.70/2 հասցեում հասարակական նշանակության շինության՝ մեծածախ առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 25 հասցեում պահեստային շինության (անգար) կառուցման նախատեսվող

գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Ա ԿԼԱՍ ԼՈԳԻՍՏԻԿՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 25 հասցեում պահեստային շինության (անգար) կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց հ.54/12-54/9 հասցեում հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Լիանա Սարգսյանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց հ. 54/12-54/9 հասցեում հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ.13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՋԻ ՎԻ ԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ. 13/7 հասցեում օգտագործված յուղերի և քսայուղերի վերամշակման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց հ.6/3 և 8 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ 12» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մալխասյանց փողոց հ. 6/3 և 8 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համլետ Վաչենանցի կողմից ներկայացված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոց հ. 27/18, 27/19 և 29/4 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

16. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

17. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

18. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 17,803.0 հազար դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով:

2.Որոշման NN 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-3 հավելվածների:

19. Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝

1) Եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր՝ համաձայն N1 հավելվածի

2) Վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Վարչական և ֆոնդային մասերի հատկացումների կատարումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը ըստ աղբյուրների՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 7 հավելվածի:

20. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը

հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
-	**Հարկային եկամուտների հաշվառման և գանձման բաժին**				
3	բաժնի պետ	1	408,000		408,000
4	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
5	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
6	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
-	**Ոչ հարկային եկամուտների հաշվառման և գանձման բաժին**				
7	բաժնի պետ	1	408,000		408,000
8	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
9	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
10	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**20.0**			**6,834,000**

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «788», «263,475,845» թվերը փոխարինել համապատասխանաբար «790», «264,597,845» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2334», «696,939,245» թվերը փոխարինել «2336», «698,061,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

21. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սույն որոշման 2-րդ կետում նշված խմբերին Երևան քաղաքում սեփականության իրավունքով պատկանող բնակելի նշանակության և կազմակերպություններին համայնքային սեփականություն հանդիսացող անհատույց (մշտական) օգտագործման տրամադրված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով հաշվարկված առկա հարկային պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից 42855032 (քառասուներկու միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար երեսուներկու) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի և դրանց մասով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

1. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունները կիրառվում են քաղաքացիների և կազմակերպությունների հետևյալ խմբերի նկատմամբ.

1) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներ,

2) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պատերազմների 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներ,

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով գերեվարված, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված (կամ նրանց ընտանիքի անդամներին) անձինք,

4) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց (մշտական) օգտագործող կազմակերպությունները՝ տվյալ անշարժ գույքի մասով, եթե համայնքային սեփականություն հանդիսացող անհատույց (մշտական) օգտագործման տրամադրված անշարժ գույքի տարածքում չի իրականացվում ձեռնարկատիրական գործունեություն:

22. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (գրքերի հավաքածու), ընդհանուր՝ 38599284.92 (երեսունութ միլիոն հինգ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր ութսունչորս դրամ իննսուներկու լումա) հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության գրադարաններին՝ համաձայն հավելվածի:

23. Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն ներդնելու, միասնական ծառայության կազմակերպման տեղական վճարը վճարելու եղանակը և տրանսպորտային միջոցում վավերացնելու կարգը սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ներդնել Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն:

2. Սահմանել, որ՝

1) Երևան քաղաքի վարչական տարածքում գործում է համայնքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն (այսուհետ՝ միասնական ծառայություն), որի շրջանակներում միասնական ծառայությունից օգտվելու համար սահմանված տեղական վճարը վճարված լինելու դեպքում անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով օգտվում են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից.

2) Միասնական ծառայության տեղական վճարները գանձում է համայնքը՝ տրանսպորտային միջոցներում տեղադրված համապատասխան սարքերի կամ օրենսդրությամբ նախատեսված վճարումն ընդունող այլ միջոցներով.

3) Ուղևորները միասնական ծառայությունից օգտվում և միասնական ծառայությունից օգտվելու համար սահմանված տեղական վճարի վճարումն իրականացնում են Երևան քաղաքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների հետևյալ տեսակի տոմսերի ձեռքբերմամբ.

ա. «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ.

բ. «180 րոպե» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 180 րոպեի ընթացքում 3 ուղևորություն (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

գ. «180 րոպե» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 180 րոպեի ընթացքում 3 ուղևորություն (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

դ. «1 օր» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ե. «1 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր

տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

զ. «7 օր» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 7 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

է. «7 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 7 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ը. «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ.

թ. «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ.

ժ. «30 օր» ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժա. «30 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժբ. «90 օր» ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժգ. «90 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժդ. «365 օր» ֆիզիկական քարտ տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժե. «365 օր» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ.

ժզ. ««Զվարթնոց» օդանավակայան» ֆիզիկական կրիչով տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ.

ժէ. ««Զվարթնոց» օդանավակայան» էլեկտրոնային տոմս՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ:»:

3) Ուղևորները պարտավոր են տրանսպորտային միջոց մուտք գործելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան մեկ րոպեի ընթացքում վավերացնել (տրանսպորտային միջոցում տեղադրված համապատասխան սարքի միջոցով հաստատել տեղական վճարը վճարված լինելու կամ զրոյական դրույքաչափի կիրառմամբ կամ կիրառման արտոնությամբ փոխադրվելու իրավունք ստացած լինելու հանգամանքը) տեղական վճարի վճարման կրիչը (համապատասխան քարտը, էլեկտրոնային կտրոնը և այլն) և մինչև ուղևորության ավարտն իրենց մոտ պահպանել վավերացված կրիչը և տեղական վճարի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց պահանջի դեպքում տրամադրել այն տեղական վճարի վճարումը և վավերացում կատարված լինելու հանգամանքն ստուգելու նպատակով, որը չներկայացնելու բացասական հետևանքները կրում է ուղևորը:

24. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի և արտաքին գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» N 37-Ն որոշման N 1 և N 2 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) N 1 հավելվածի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. Երևան քաղաքում գովազդ տեղադրելու (այդ թվում՝ տրանսպորտային միջոցի վրա) թույլտվություն ստանալու համար գովազդատուն կամ գովազդակիրը դիմում է ներկայացնում էլեկտրոնային եղանակով՝ www.govazd.yerevan.am կայքի միջոցով: Մեկ դիմումով կարող է հայցվել միայն մեկ գովազդի վերաբերող թույլտվություն:».

2) N 1 հավելվածի 14.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14.1. Սույն հավելվածի 14-րդ կետում նշված էլեկտրոնային դիմումը պետք է պարունակի.

1) դիմողի անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում վերջինիս անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

2) դիմումը ներկայացնող անձի անունը, ազգանունը (լիազորված անձի կողմից դիմումը ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձի անունը, ազգանունը),

3) գովազդի տեղաբաշխման ժամկետի սկիզբը և ավարտը: Գովազդի տեղաբաշխման ժամկետի ավարտը չի կարող լինել ավելի ուշ, քան ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը,

4) դիմողի հետ կապ հաստատելու միջոց հանդիսացող բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

5) տվյալներ այն գովազդային միջոցի մասին, որի վրա նախատեսվում է տեղադրել գովազդը (շարժական կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ այլ գույքային իրավունքի առկայության մասին),

6) տվյաներ արտաքին գովազդի տեղադրման կարգավիճակի վերաբերյալ (նախկինում սահմանված կարգով տրամադրված թույլտվության հիման վրա տեղադրված կամ չտեղադրված (նոր տեղադրվող)),

7) տվյալներ գովազդի տեղակայման վայրի մասին (վարչական շրջան, փողոց, շենք, շինություն),

8) գովազդի միջոցի տեղադրման բարձրությունը գետնի մակարդակից և չափսերը (բարձրություն, լայնություն և ընդհանուր մակերես),

9) գովազդի միջոցի մի քանի կողմ ունենալու դեպքում՝ կողմի նկարագիրը (համարը),

10) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը:».

3) N 1 հավելվածի 14.2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. 2. Սույն հավելվածի 14-րդ կետում նշված էլեկտրոնային դիմումին կցվում են գովազդատուի կամ գովազդակրի կողմից ներկայացված հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) ստատիկ գովազդի դեպքում՝ գունավոր ուրվանկարը (էսքիզը)՝ գովազդի չափերի և ընդհանուր մակերեսի, ինչպես նաև շենքի, շինության կամ այլ կառույցի վրա տեղադրվելու դեպքում, դրա ճարտարապետական տարրերից հեռավորության նշումով, իսկ էլեկտրոնային էկրանի վրա գովազդ տեղադրելու դեպքում՝ էլեկտրոնային գովազդային նյութերը,

3) գովազդի տեղադրման տեղանքի առկա վիճակի լուսանկարը առնվազն չորս մետր հեռավորությունից, այնպես, որ լիարժեք հասկանալի լինի, թե ինչ տարածքի, շինության կամ որևէ այլ մակերեսի վրա է նախատեսվում տեղադրել գովազդը,

4) եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի կողմից, ապա օրենքով սահմանված կարգով լիազորագիր և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

5) տեղական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթի պատճենը,

6) դիմումի համար նշանակություն ունեցող այլ փաստաթղթեր:».

4) N 1 հավելվածի 45-րդ կետում՝

ա. 10-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով.

բ. 10-րդ ենթակետից հետո լրացնել նոր 11-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) տեղադրվեն կանաչապատ տարածքների, ինչպես նաև սիզամարգի վրա:».

5) N 1 հավելվածի 55-րդ կետում «0.60 մետրից» բառերը փոխարինել «0.30 մետրից» բառերով.

6) N 1 հավելվածի 59-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) փոքր չափի՝ առավելագույնը մինչև 1.8 մետր բարձրությամբ, 1.2 մետր լայնությամբ, 0.30 մետր խորությամբ:».

7) N 1 հավելվածի 124-ը կետը ճանաչել ուժը կորցրած.

8) N 1 հավելվածի 143-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) առանց տակդիրի առանձին տառերի (ներառյալ ապրանքային նշանի պատկերը) միջոցով, առավելագույնը 2 տողով, հորիզոնական դասավորվածությամբ,».

9) N 1 հավելվածի 177-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«177. Վառելիքի կամ էլեկտրական ավտոլցակայանների զբաղեցրած հողատարածքներում գովազդ, գովազդի միջոց, բացի առանձին վահանակից, թույլատրվում է տեղադրել ծածկի ֆրիզային հատվածում առանձին ծավալային տառերով՝ ֆրիզի աջ և ձախ եզրերից պահպանելով 0.30 մետր հեռավորություն:».

10) N 1 հավելվածի 207-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«207. Հեռախոսախցիկների, բանկոմատների, վճարային տերմինալների, առևտրի ավտոմատ սարքավորումների (վենդինգային սարքավորումներ), սառնարանների, գովազդի տեղեկատու մակերեսի չափսերը որոշվում են գովազդի տեսանելի կողմերի ամբողջական կոմպոզիցիոն լուծման զբաղեցրած ընդհանուր մակերեսով: Հաշվարկը կատարվում է՝ կոմպոզիցիան ուղղանկյան մեջ տեղադրելով՝ ներառելով առավելագույն բարձրությունն ու լայնությունը:».

11) N 2 հավելվածի N 1 Ձև-ը ուժը կորցրած ճանաչել:

25. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 266-Ն որոշման 10-րդ կետից հետո լրացնել նոր 10.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված 3-րդ և 4-րդ կարգի վթարայնության աստիճանի 10 և ավել բնակարան ունեցող շենքերի քանդման և փոխարենը նոր բազմաբնակարան շենքերի կառուցման ծրագրերի շրջանակներում Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման (առավելագույնը մինչև 12 ամիս ժամկետով) համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:»:

26. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 265-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 265-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Երևան քաղաքի վարչական տարածքում գործում է համայնքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն, որի շրջանակներում սույն որոշմամբ սահմանված ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար սահմանված տեղական վճարը վճարված լինելու դեպքում անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով օգտվում են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից.

2) Ուղևորության քանակական սահմանափակում ունեցող ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ Երևան համայնքում 100 տոկոս

համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից օգտվելու դեպքում՝ ուղևորության օգտագործման հնարավորությունը ավտոբուսների, տրոլեյբուսների, Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից օգտվելու յուրաքանչյուր դեպքում՝ 1 օգտագործման հնարավորությամբ նվազեցվում է:»:

2) Որոշման հավելվածի 36-րդ կետից հետո լրացնել նոր 37-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«37. Երևան քաղաքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար տեղական վճարը սահմանվում է՝

1) «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 150 դրամ.

2) «180 րոպե» ֆիզիկական կրիչով տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 180 րոպեի ընթացքում 3 ուղևորություն (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 300 դրամ.

3) «180 րոպե» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 180 րոպեի ընթացքում 3 ուղևորություն (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 280 դրամ.

4) «1 օր» ֆիզիկական կրիչով տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 900 դրամ.

5) «1 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 10 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 880 դրամ.

6) «7 օր» ֆիզիկական կրիչով տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 7 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 5000 դրամ.

7) «7 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 7 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 4800 դրամ.

8) «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ՝ 1500 դրամ.

9) «Բազմակի օգտագործման» 10 ուղևորություն ներառող էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 45 օրվա ընթացքում 10 ուղևորության օգտագործման հնարավորությամբ՝ 1500 դրամ.

10) «30 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 9000 դրամ.

11) «30 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 8800 դրամ.

12) «90 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 24000 դրամ.

13) «90 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 23600 դրամ.

14) «365 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 90000 դրամ.

15) «365 օր» էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով,

ակտիվացման պահից 365 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ՝ 88000 դրամ.

